



Կարճ գրություն 1

Հունվար 2011

Պետական գնումներ

Պետական Գնումները ԵՄ-ում. Օրենսդրական շրջանակը, Հիմնական Սկզբունքները և Կառույցները

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

- Ընդհանուր համատեքստը. Հռոմի Պայմանագիրը, իրավունքի ընդհանուր սկզբունքները, ԵՄ Հրահանգները
- Հրահանգների գործողության շրջանակը
- Հրահանգների “իրավական հետևանքները”
- Պետական գնումների հիմնական սկզբունքները. մրցակցություն, հավասար վերաբերմունք, խտրականության արգելք, թափանցիկություն
- Եվրոպական կառույցների դերը

ԵՄ-ում գործող պետական գնումների սկզբունքները հասկանալու համար անհրաժեշտ է ոչ միայն ուսումնասիրել հենց գնումներին վերաբերող Հրահանգները, այլ նաև այն համատեքստը, որի շրջանակներում դրանք ընդունվել են: Նույնիսկ Հրահանգների գոյության պայմաններում, Հռոմի Պայմանագրում պարունակվող ավելի ընդհանուր դրույթները, ինչպես նաև իրավունքի ավելի ընդհանուր սկզբունքները կկիրառվեն, որոնք ուղեցույց կհանդիսանան Հրահանգների մեկնաբանման համար: Կարևոր է նաև հասկանալ համայնքային տարբեր կառույցների դերը:

Հռոմի Պայմանագիրը. 1957 թվականի Հռոմի Պայմանագիրը (և Հռոմի Պայմանագիրը փոփոխող հետագա պայմանագրերը) չեն ներառում պետական գնումներին վերաբերող որևէ հստակ դրույթ: Այնուամենայնիվ, Պայմանագիրը սահմանում է մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք ընկած են ԵՄ հիմքում: Այս հիմնարար սկզբունքներից պետական գնումներին առավելագույնս վերաբերում են ներքոնշյալները;

- ցանկացած անձի համար, անկախ նրա ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունը.
- Ապրանքների ազատ շրջանառությունը
- Ծառայությունների մատուցման ազատությունը
- Հիմնադրման ազատությունը

Իրավունքի ընդհանուր սկզբունքները. Ի հավելումն Պայմանագրի այս հիմնարար սկզբունքների՝ Արդարադատության Եվրոպական Դատարանի (ԱԵԴ) նախադեպային իրավունքից առաջացել են իրավունքի որոշ ընդհանուր սկզբունքներ: Այս ընդհանուր սկզբունքները կարևոր են, քանի որ դրանք հաճախ են կիրառվում ԱԵԴ-ի կողմից՝ լրացնելու օրենսդրական բացերը և լուծումներ տալու իրավիճակներին, որոնք հաճախ շատ բարդ են: Գնումների համատեքստում իրավունքի այս ընդհանուր սկզբունքներից ամենակարևորները հետևյալն են.

- վերաբերմունքի հավասարություն
- թափանցիկություն
- փոխադարձ ճանաչում
- համամասնություն

Այս ընդհանուր սկզբունքները կիրառվում են Հրահանգներից անկախ այնպես, որ նույնիսկ, եթե Հրահանգները չեն կիրառվում, սկզբունքներն ամեն դեպքում կարող են կիրառվել պետական պատվրատուների կողմից պայմանագրի շտրիման ժամանակ:

ԵՄ Հրահանգները. Պետական գնումների ոլորտում Պայմանագրի սկզբունքներն ամրապնդելու և անդամ երկրներին անհրաժեշտ ուղղություն ցույց տալու համար Համայնքն ընդունել է գնումների վերաբերյալ մի շարք Հրահանգներ:

Կան ընթացակարգային հարցեր ընդգրկող երկու Հրահանգներ; Դրանք են հանրային ոլորտի 2004/18/ԵՄ Հրահանգը և կոմունալ ծառայությունների ոլորտի 2004/17/ԵՄ Հրահանգը:

Կան երկու այլ “իրավունքների պաշտպանության միջոցների” Հրահանգներ, որոնք կիրառվում են բողոքների և ընդունված որոշումների վերանայման համար: Դրանք են հանրային ոլորտում իրավունքների պաշտպանության միջոցների 89/665/ԵԽ Հրահանգը և կոմունալ ծառայությունների ոլորտում 92/13/ԵԽ Հրահանգը: Այս երկու Իրավունքների պաշտպանության միջոցների Հրահանգները նշանակալիորեն փոփոխվել են նոր՝ 2007/66/ԵԽ Հրահանգով, որը անդամ երկրները պետք է կիրարկեին մինչև 2009 թվականի Դեկտեմբերի 20-ը:

Ի հավելումն՝ ներկայումս կա նոր Հրահանգ, որը կիրառում է ավելի ճկուն և վստահելի ռեժիմ սպառազինության ապահովման և դրա հետ կապված աշխատանքների և ծառայությունների գնման նկատմամբ:

Եվրոպական Հանձնաժողովը լրացրել է այս ընթացակարգային և իրավունքների պաշտպանության միջոցների Հրահանգները հետագայում ընդունված օրենսդրությամբ, որը գործ ունի գնման գործընթացի բազմազան հայեցակետերի հետ:

Ուշին է Հրահանգների իրավակիրատ շրջանակը:

Հրահանգները նպատակ չունեն սահմանել նոր *ընդհանուր* կարգավորիչ ռեժիմներ գնումների ոլորտում ԵՄ Անդամ երկրների համար և Անդամ երկրները կարող են շարունակել կիրառել ազգային ընթացակարգերը, որոնք *հարմարեցված* են Հրահանգներին: Դրանք, այսպիսով, թույլատրում են Անդամ երկրներին պահպանել կամ ընդունել նյութական և ընթացակարգային կանոններ այնքանով, որքանով դրանք հակասության մեջ չեն Հրահանգների կամ Պայմանագրի դրույթների հետ: Որպես հետևանք, Անդամ երկրները իրավասու են ինքնուրույն կարգավորելու մի շարք գործնական խնդրներ:

Ըստ էության, Հրահանգների ընդհանուր կանոնները կազմված են հիմնական սկզբունքների, մեծամասամբ՝ խտրականության արգելման, հավասար վերաբերմունքի և թափանցիկության, կիրառումից, հետևյալում.

- գնումների առաջարկվող պայմանագրերի հրապարակայնություն
- տեխնիկական առաջարկների մշակում
- գնումների ընթացակարգի ընտրություն
- մասնակիցների որակավորում և ընտրություն
- պայմանագրի շնորհում:

ԵՄ-ում պետական գնումների բոլոր պայմանագրերը մանրամասն կարգավորելու փոխարեն Համայնքի օրենսդիրը որոշեց Հրահանգներով սահմանել միայն այն պայմանագրերը, որոնք հստակ կերպով ունակ են ազդել Անդամ երկրների միջև առևտրի վրա: Այս սահմանումը ներառում է՝.

- պայմանագրեր, որոնք բավականաչափ բարձր արժեք ունեն այլ Անդամ երկրներից տնտեսվարող սուբյեկտներ գրավելու համար (այսինքն, եթե պայմանագիրը շահելու հնարավոր առավելությունները գերազանցում են ավելի մեծ տարածությունից սպրանքներ, աշխատանքներ և ծառայություններ մատակարարելու հավելյալ ծախսերը) և/կամ

- այն պայմանագրերը, որոնք վերաբերում են միջսահմանային առևտրին ենթակա օբյեկտներին:

Որոշում և Հրահանգների “իրավական հետևանքները”:

Անդամ երկրները պարտավոր են ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ ապահովելու Պայմանագրից ծագող կամ Համայնքի կառույցների գործողություններից առաջացող պարտավորությունների կատարումը: Գնումների վերաբերյալ Հրահանգները, ինչպես բոլոր Հրահանգները, իրականում ուղղակիորեն կիրառելի չեն, ինչը նշանակում է, որ դրանք մեխանիկորեն չեն կիրառվում:

Անդամ երկրներում իրենց ազդեցություններն ունենալու համար դրանք պետք է կիրարկվեն կամ “փոխատեղվեն” որպես ազգային իրավունք: Հետևաբար, Անդամ երկրներից պահանջվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ազգային իրավունքում Հրահանգների դրույթներն ամբողջական ծավալով ուժի մեջ մտցնելու համար և ապահովելու, որ ոչ մի այլ ազգային իրավական ակտ չխախտի դրանց կիրառելիությունը: Սա սովորաբար ստանում է Հրահանգները ազգային օրենսդրության “փոխատեղման” և օրենսդրական բոլոր հակասող դրույթների վերացման տեսք:

Հրահանգները պարտադիր են միայն արդյունքների առումով, որոնց պետք է հասնել, բայց ձևի և մեթոդների ընտրությունը թողնում են ազգային իշխանություններին: Այսպիսով, ԵՄ Անդամ երկրներին անհրաժեշտ չէ ստեղծել Հրահանգների ճշգրիտ կրկնօրինակն ազգային օրենսդրության մեջ, չնայած որոշ անդամ պետություններ հենց այդպես էլ վարվել են:

Հրահանգները ճիշտ կամ ժամանակին չկիրարկվելն այնուամենայնիվ չի նշանակում, որ այդ Հրահանգն ուժ չունի: Անդամ երկրներն իրավասու չեն զրկել այս Հրահանգների սուբյեկտներին (պետական պատվիրատուին և մասնակիցներին) այն իրավունքներից, որոնք նրանք կարող էին ունենալ Հրահանգների համաձայն: ԱԵԴ “ուղղակի ազդեցության” դոկտրինայի համաձայն՝ անհատները կարող են ազգային դատարաններում կյանքի կոչել Հրահանգներով վերապահված իրավունքները, ցանկացած ժամանակ, երբ համապատասխան պայմանները բավարարված են:

Որոշակի Հրահանգի ուղղակի ազդեցության առաջացման համար անհրաժեշտ պայմանները հետևյալն են.

- Անդամ երկրների վրա դրված պարտականությունները պարզ են և հստակ,
- պարտականությունը առանց պայմանների է
- Միջոցների կիրարկման դեպքում Անդամ երկրների կամ Համայնքային ինստիտուտների հայեցողական իրավունքը սահմանափակված չէ:

ԱԵԴ-ն սահմանել է, որ Հրահանգների դրույթներից շատերն ուղղակի ուժ ունեն, բայց որ յուրաքանչյուր դրույթ կքննարկվի առանձին:

Որոշնք են պետական գնումների հիմնական սկզբունքները:

Ի սկզբանե, ԵՄ-ի հիմնական նպատակներից մեկը եղել է միասնական շուկայի ստեղծումը, որը վերացնում է ԵՄ Անդամ երկրների միջև ապրանքների և ծառայությունների առևտրի խոչընդոտները: Գնումների միասնական շուկայի ստեղծումը նշանակում է գնումների համատեքստում առաջացած՝ առևտրի ցանկացած խոչընդոտի վերացում:

Առևտրի խոչընդոտները կարող են ստեղծվել օրենսդրական ակտերի միջոցով կամ պետական պատվիրատուի կամ մասնակիցների գործողությունների միջոցով: Օրենսդրությունը կարող է խոչընդոտներ ստեղծել՝ սահմանելով “գնի ազգայինը” պահանջը: Պետական պատվիրատուն կարող է խոչընդոտներ սահմանել՝ ընդունելով շնորհման խտրական որոշումներ: Մասնակիցները նույնպես կարող են ստեղծել խոչընդոտներ գների մեջ խարդախություն անելու նպատակով, միմյանց միջև գաղտնի պայմանավորվածություն ձեռք բերելու միջոցով: Այս բոլոր խոչընդոտներն ունեն միասնական գնումների շուկայում մրցակցության խախտման ազդեցություն: Պետական գնումների օրենսդրության առաջնային նպատակներից մեկը գոյություն ունեցող խոչընդոտների վերացումն է և նոր խոչընդոտների առաջացման կանխարգելումը: Դա արվում է օրենսդրությունից ծագող հիմնական սկզբունքները կիրառելու միջոցով:

Չնայած դրանք բոլորը փոխկապված են, այս սկզբունքները կարող են նվազեցվել մինչև մի շարք հիմնարար սկզբունքների:

- **Մրցակցություն**

Տնտեսական տեսանկյունից “մրցակցությունը” գործարկում է որպես հայտնաբերման ընթացակարգ՝ թույլատրելով տարբեր մասնակիցների ներկայացնել գները, որոնցով ապրանքները և ծառայությունները հասանելի են շուկայում: Այս գները գործում են որպես կողմնորոշիչներ և արտացոլում են պահանջարկի և առաջարկի պայմանները այս կամ այն պահին: Դրանք նաև արտացոլում են տարբեր (ոչ համասեռ) հասանելի արտադրանքի որակի և վաճառքի պայմանների ու ժամկետների մեջ առկա տարբերությունները:

Ահա թե ինչու է հայտարարումն այդքան կարևոր: Հայտարարումը երաշխավորում է հնարավոր ամենալայն հրապարակայնությունը և մրցակցությունը՝ հնարավորություն տալով ամբողջ Համայնքից մասնակիցներին մասնակցել, այսպիսով ապահովելով ամենամեծ հնարավոր ընտրությունը:

Մրցակցության արդարությունը պաշտպանելը (կամ “միասնական կանոնները” պահպանելը) գնումների արդյունավետ և տնտեսող արդյունքների ձեռքբերման հիմնական խնդիրն է: Գնումների վերաբերյալ օրենսդրությունը ձգտում է կանխել Համայնքի ներսում մրցակցության ցանկացած խախտում կամ սահմանափակում, և մասնակիցների՝ գնման գործընթացին մասնակցելու հնարավորություն ունենալը կանխելու ցանկացած փորձ կարգելվի:

Նման փորձերը կարող են ունենալ բազմաթիվ ձևեր և կարող են ազդել արտադրանքի կամ ծառայության կամ հենց մասնակցի վրա: Որպես արդյունք, օրենսդրությունն արգելում է ապրանքների ազատ շրջանառության խոչընդոտները, ինչպիսիք են ներմուծման սահմանափակումներն ու “գնիր ազգայինը” քաղաքականությունը, և ծառայությունների մատուցման խոչընդոտները, ինչպիսիք են օտարերկրյա մասնակիցներին արգելելը մասնակցել գնման գործընթացին՝ տեղական գրանցման պահանջն օգտագործելու միջոցով:

Մրցակցության պաշտպանությունը նաև հավասար վերաբերմունքի պահպանման, խտրական մոտեցումից խուսափելու, փոխադարձ ճանաչման սկզբունքների կիրառման (հավասար արտադրանքի և որակավորման) և ցանկացած բացառության՝ համամասն լինելն ապահովելու հարցն է:

- **Հավասար վերաբերմունք և խտրականության արգելք**

Հավասար վերաբերմունքի և խտրականության հասկացությունները միևնույնը չեն: Ընդհանուր առմամբ, գնումներին վերաբերող ամբողջ օրենսդրությունը պետք է ձգտի պահպանել հավասարությունը մասնակիցների միջև: Եվրոպական համատեքստում, այնուամենայնիվ, այս հավասարությունը հիմնված կլինի նաև “ազգության” վրա:

Հավասար վերաբերմունքը հասկացություն է, որը հիմնականում պահանջում է, որպեսզի համանման իրադրություններին վերաբերեն նույն ձևով, կամ տարբեր իրադրությունների չվերաբերեն նույն ձևով և այն պահանջում է համանման մասնակիցների նկատմամբ համանման վերաբերմունք: Որոշ դեպքերում սա ենթադրում է, որ պետական պավիրատուն չպետք է հաշվի առնի առանձին մասնակիցների տարբեր կարողությունները և նրանց կողմից հանդիպած դժվարությունները, այլ պետք է նրանց գնահատի ներկայացրած հայտերի հիման վրա: Դա նախատեսում է գների և հայտերի որակի օբյեկտիվ գնահատում և հաշվի չի առնում այն հանգամանքները, որոնք չեն վերաբերում տնտեսապես արդյունավետ հայտի հայտնաբերմանը:

Եվրոպական համատեքստում հավասար վերաբերմունքի հասկացությունը պահանջում է ևս մեկ սահմանում, քանի որ այս համատեքստում հավասարության հասկացությունը, ի հավելումն, հիմնված է ազգության կամ ապրանքների ծագման վայրի վրա, այնպես, որ Համայնքի ռեզիդենտ հանդիսացող բոլոր մասնակիցները և բոլոր հայտերը, ներառյալ՝ Համայնքային ծագման ապրանքները, պետք է ստանան հավասար վերաբերմունք (սա խտրականության արգելման սկզբունքն է):

Սա ավելին է, քան ուղղակի հավասար վերաբերմունքի գաղափարի ընդլայնում: Սա ենթադրում է, որ համապատասխանելիության կամ ծագման ցանկացած պայման (հիմնված ազգային պատկանելիության կամ տեղական ծագման վրա) մեխանիկորեն առաջացնում են անհավասար վերաբերմունք, քանի որ այս պայմանները, ըստ էության, խտրականություն են դրսևորում որոշակի խումբ (օտարերկրյա) մասնակիցների նկատմամբ կամ ի օգուտ մյուսներին: Այնուամենայնիվ, չնայած խտրականությունը տրված

համատեքստում կառաջացնի անհավասար վերաբերմունք, անհավասար վերաբերմունքը ոչ միշտ է առաջացնում խտրականություն:

• **Թափանցիկություն**

Թափանցիկությունը միայն վերջերս է առաջացել որպես առանձին սկզբունք, չնայած հավանաբար ավելի լավ է այն համարել գործիք, որը պետք է օգտագործվի այլ նպատակների հասնելու համար: Օրինակ՝

- Օրենսդրության հրապարակումը և հասանելիությունն ապահովում են հստակություն և որոշակիություն բոլոր շահագրգիռ կողմերի համար և հնարավորություն են տալիս պետական պատվիրատուին և մասնակիցներին տեղյակ լինել խաղի կանոններին:
- Հայտարարման պահանջները երաշխավորում են հայտնաբերման գործընթացի թափանցիկությունը:
- տեխնիկական առաջարկի և ընտրության ու շնորհման չափորոշիչների նախապես հրապարակումը թույլատրում է շահագրգիռ կողմերին ստուգել, որ դրանք արդար են և ոչ խտրական:
- Չայնագրման և հաշվետվության պահանջները ապահովում են, որ պետական պատվիրատուի գործողություններն անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի ստուգել:

Վերջին նպատակները նաև “հաշվետվողականության” հիմնարար հայեցակետերից են, այսինքն՝ գնումների պատասխանատուներին հաշվետու դարձնել իրենց որոշումների և գործողությունների համար: “Հաշվետվողականությունը” նաև հաճախ ազգային գնումների համակարգերի անմիջական նպատակն է, և թափանցիկության դրույթներն ամրացնում են այս հաշվետվողականությունը:

ԵՄ համատեքստում թափանցիկության սկզբունքի կարևորությունը, այնուամենայնիվ, այն է, որ դա կիրառվում է օրենսդրությունից անկախ: Այսպիսով, եթե գնումների որոշակի պայմանագիր դուրս է Հրահանգների իրավակիրառ շրջանակից, հնարավոր է, որ թափանցիկության սկզբունքը շարունակի կիրառվել, որպեսզի սահմանի հայտարարման պահանջներ: ԱԵԴ-ն հաստատում է, որ դա այդպես է:

Վերոնշյալ սկզբունքներից որոշները ազգային օրենսդրությունում ձևակերպվում են տարբեր կերպ կամ միացվում են իրար: Կարող եք հանդիպել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են, օրինակ, “տնտեսում և արդյունավետություն”, “գնի և որակի հարաբերակցություն” և “ազնվության” կամ “անբասիրություն”:

Գնի և որակի հարաբերակցությունը

Գնումների գործընթացների հիմքում ընկած հիմնական տնտեսական շարժիչ ուժը անհրաժեշտությունն է՝ ապահովելու, որ բոլոր գնումները ներկայացնեն գնի և որակի հարաբերակցություն: Հրահանգներն անմիջականորեն չեն անդրադառնում այս հարցին, բայց անհրաժեշտ է տեսադաշտից չկորցնել անհրաժեշտությունը՝ ապահովելու, որ գնի և որակի հարաբերակցությունը լինի գնումների գործընթացների հիմնական

արդյունքներից մեկը: Գնի և որակի հարաբերակցություն տերմինը նշանակում է գների հետ կապված և գների հետ չկապված տարբեր գործոնների միջև ամենաբարենպաստ համակցություն, որոնք միասին բավարարում են պետական պատվիրատուի պահանջները: Այս տարբեր գործոնների ամենաբարենպաստ համակցությունը կազմող տարրերը տարբեր են գնումից գնում և կախված են պետական պատվիրատուի կողմից տվյալ գնումների գործընթացի համար պահանջվող արդյունքից:

Ութն է Եվրոպական կառույցների դերը:

Մի շարք տարբեր կազմակերպություններ ներգրավված են գնումներում Եվրոպական մակարդակում: Այդ կազմակերպությունները հետևյալն են.

Համայնքի օրենսդրի դերը. Չնայած Պայմանագիրը (1957 Հռոմի Պայմանագիրը և Հռոմի Պայմանագիրը փոփոխող պայմանագրերը) օգտագործում է տարբեր տերմինաբանություն՝ Համայնքի օրենսդիրը, ըստ էության, Եվրոպական Համայնքների Խորհուրդն է, որը գործում է կամ միայնակ կամ Եվրոպական Պառլամենտի հետ համագործակցությամբ: Գնումների վերաբերյալ բոլոր վերջին Հրահանգներն ընդունված են այս երկու ինստիտուտների կողմից միասին՝ օգտագործելով “որոշումների միասին ընդունման” ընթացակարգը:

Խորհրդին վստահվել է Անդամ երկրների ընդհանուր տնտեսական քաղաքականությունների համակարգման ապահովման դերը, որոշումներ ընդունելու լիազորությունը, և իր կողմից ընդունված ակտերում Հանձնաժողովին լիազորություններ վերապահելը՝ կիրարկելու Խորհրդի կողմից սահմանած կանոնները:

Այնուամենայնիվ, էական է, որ Խորհուրդը չունի նախաձեռնության իրավունք: Այսպիսով, այն լիազորություն չունի՝ ընդունել օրենսդրություն, որն առաջարկված չէ Հանձնաժողովի կողմից:

ԵՄ անդամների դերը. ԵՄ նպատակների իրագործման համար Անդամ երկրները պարտավոր են ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ ապահովելու Պայմանագրից ծագող կամ Համայնքի կառույցների կողմից ձեռնարկվող գործողություններից առաջացող պարտավորությունների կատարումը: Նրանցից պահանջվում է օժանդակել Համայնքային խնդիրների լուծմանը, և նրանք պետք է ձեռնպահ մնան ցանկացած միջոցից, որը կարող է հարվածի տակ դնել Պայմանագրի նպատակների իրագործումը:

Հրահանգների իմաստով, Անդամ երկրներից, հետևաբար, պահանջվում է ձեռնարկել միջոցներ, որոնք անհրաժեշտ են դրանց դրույթներն ազգային իրավունքում ամբողջական ծավալով ուժի մեջ դնելու համար և ապահովելու, որ ոչ մի այլ ազգային օրենսդրական ակտ չխախտի դրանց կիրառելիությունը: Մասվորաբար ստանում է Հրահանգները ազգային օրենսդրության “փոխատեղման” և օրենսդրական բոլոր հակասող դրույթների վերացման տեսք:

Կարևոր է նշել, որ չնայած Հրահանգներն ուղղակի ազդեցություն ունեն, երբ հաստուկ պայմաններ բավարարվում են (ինչպես քննարկվել է վերևում), քանի որ կարող են իրավունքներ տալ, նույնիսկ եթե չեն կիրարկվում, նրանք ուղղակի կիրառելի չեն, այսինքն՝ կարիք ունեն ազգային օրենսդրության փոխատեղման:

Ավելին, դրանք պարտադիր են միայն արդյունքների առումով, որոնց պետք է հասնել, բայց ձևի և մեթոդների ընտրությունը թողնում են ազգային իշխանություններին: Այսպիսով, Անդամ երկրներին անհրաժեշտ չէ ստեղծել Հրահանգների ճշգրիտ կրկնօրինակն ազգային օրենսդրության մեջ:

Ազգային իշխանությունները կարող են վերաբարձրել Հրահանգների դրույթները նմանատիպ օրինակով՝ փոփոխելով գոյություն ունեցող օրենսդրությունը կամ ստեղծելով նոր օրենսդրություն կամ օրենսգրքեր և այլն՝ պայմանով, որ նրանք կատանան նույն արդյունքները:

ԵՄ Հանձնաժողովի դերը. Ի հավելումն օրենսդրության նախաձեռնողի դերում հանդես գալուն՝ Եվրոպական Հանձնաժողովին Պայմանագրով տրված է նաև դրա պահպանի դերը: Դրա վրա դրված է հստակ խնդիր՝ ապահովելու, որ Պայմանագրի դրույթները և կառույցների կողմից դրանց համաձայն ձեռնարկված միջոցները կիրառվեն:

Այսպիսով, գնումների ոլորտում քաղաքականության առաջնային կերտող հանդես գալու հետ մեկտեղ, Հանձնաժողովը նաև պատասխանատու է Հրահանգների կիրառման և, ընդհանուր առմամբ, կյանքի կոչման համար: Գնումների դեպքում, պատասխանատու Գլխավոր դիրեկտորիան Ներքին շուկայի և ծառայությունների ԳԴ-ն է: Ներքին շուկայի և ծառայությունների ԳԴ-ի կողմից ձեռնարկվող կիրարկման միջոցները ներառում են ենթաօրենսդրական ակտերի ընդունումը:

Չնայած ազգային դատարաններում/վերանայող մարմիններում իրենց պարտավորությունները խախտած պետական մարմիններին պարտավորությունների իրականացման պարտադրումը կատարվում է շահագրգիռ տնտեսվարող սուբյեկտների հայցով, այս պետական մարմինների կողմից՝ որպես անդամ երկրներից առաջացած մարմինների, խախտումները զուգահեռաբար կհանգեցնեն անդամ երկրների անկարողությանը՝ կատարել Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները: Նման անկարողությունը կարող է վիճարկվել անմիջականորեն Հանձնաժողովի կողմից՝ Արդարադատության Եվրոպական դատարանում (ԱԵԴ):

Արդարադատության Եվրոպական դատարանի դերը. Կան Համայնքային մակարդակի երկու դատարաններ, յուրաքանչյուրն իր իրավասությամբ. Ընդհանուր Դատարանը (նախկինում՝ Առաջին Աստանի Դատարան {ԱԱԴ}), որը զբաղվում է համայնքի ինստիտուտների դեմ բերված հայցերով, և Արդարադատության Եվրոպական Դատարանը (ԱԵԴ): Գնումներին առնչվող դեպքերի մեծ մասում, ավելի շահագրգիռ է ԱԵԴ-ն:

ԱԵԴ-ն ապահովում է Պայմանագրի և այն կիրարկող կանոնների մեկնաբանման և կիրառման դեպքում օրենքի պահպանումը: Այս նպատակով մի շարք լիազորություններ են ուղղակիորեն վստահվել ԱԵԴ-ին: Այս լիազորությունները հիմնականում նպատակաուղղված են հնարավորություն տալու ԱԵԴ-ին՝ դատելու ինստիտուտների և Անդամ երկրների գործողությունները և անգործությունը՝ Համայնքի իրավունքի համաձայն և ապահովելու Համայնքի իրավունքի մեկնաբանման և ազգային դատարանների կողմից այդ իրավունքի կիրառման միասնականությունը:

Գնումների դեպքում կա ԱԵԴ աշխատանքի երեք ոլորտներ, որոնք կարևոր են:

- **Վեճերի լուծում**

ԱԵԴ-ն իրավասություն ունի քննելու Հանձնաժողովի, որը գործում է որպես Պայմանագրի պահապան, և Անդամ երկրների միջև վեճերը Անդամ երկրի կողմից՝ Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարման անկարողության առնչությամբ: Սրանց հաճախ անվանում են Հանձնաժողովի՝ խախտման ընթացակարգեր:

- **Նախնական Որոշումներ**

ԱԵԴ-ին վերապահված կարևոր լիազորությունն է նախնական որոշումների միջոցով Պայմանագրի *մեկնաբանման* և Համայնքի ինստիտուտների ակտերի *վավերականության* և *մեկնաբանման* վերաբերյալ որոշումների կայացումն և լիազորությունը, եթե այս առարկայի վերաբերյալ հարց է բարձրացվել ազգային դատարանում կամ տրիբունալում:

Այսպիսով, Անդամ երկրների և մասնավոր անձանց կամ հենց մասնավոր անձանց միջև առաջացող վեճերում Համայնքի իրավունքի մեկնաբանմանը, կիրառմանը և վավերականությանն առնչվող հարցերով, որոնք ծագում են ազգային ընթացակարգերի համատեքստում, կարող են դիմել ԱԵԴ-ին: Եթե նման վեճերը ծագում են գնումների վեճի համատեքստում, որը բերվել է ազգային դատարան/վերանայման մարմին, օրինակ, Իրավունքների պաշտպանության միջոցների մասին Հրահանգի համաձայն, ազգային դատարանները կարող են դիմել ԱԵԴ՝ մեկնաբանման համար: Սույն ընթացակարգի համաձայն՝ ազգային դատարանը/վերանայման մարմինը կհաստատի գործի փաստերը և կձևակերպի ԱԵԴ մեկնաբանման համար հարցերը, որոնց պատասխաններն անհրաժեշտ են գործի լուծման համար:

- **Իրավունքի ընդհանուր սկզբունքները**

Իր իրավասությունն իրականացնելիս, ԱԵԴ-ն պատճառ է դարձել Համայնքի իրավունքի կիրառման և մեկնաբանման համար և այսպես վարվելով, հաճախ ձգտել է լցնել Համայնքի իրավունքի բացերը՝ հղում անելով իրավունքի ընդհանուր սկզբունքներին: Սրանք չգրված կանոններն են, որոնք չեն պարունակվում Պայմանագրում, բայց ոգեշնչված են ԵՄ Անդամ երկրների ազգային համակարգերում ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Հետագա ընթերցանություն. ԵՄ օրենսդրական շրջանակը կազմող բազմազան տեքստերը, մի շարք օգտակար փաստաթղթերի և հղումների հետ մեկտեղ, կարող եք գտնել Ներքին շուկայի և ծառայությունների ԳԴ-ի համացանցային էջում.

http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/legislation_en.htm

ԵՄ Պայմանագրի տեքստերը կարող եք գտնել.

<http://www.eurotreaties.com/eurotexts.html>

[SIGMA Public Procurement Training Manual](#)